

ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ


Ն. ԹՈՐՈՍՏԵԱՆ

Երևանի կամ արևել

գրուած ինչպէս քէ ուղղել ան

ճորիւն. ԱՐՇԱՆՈՅՍ րազրի

ԳԱԼԻԷ (Եգիպտոս)



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԻՆ

ՆԳԻՊՈՍԻ ԶԱՄԱՐ	
Տարեկան ողջ դրամներ	60
Վե՛յտանայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՒՆԵՐ	
Տարեկան ծրարի	20
Վե՛յտանայ	13

Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԵՐԱՅԻՆ ԶՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ԵԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԻՆ ԿԱՆԵՆԿ ԵՒ ԹՂԹԱՍԱՐԻ ԺԱԽՔԸ ԽՈՐԱԳՐՈՒՄԵՆԱՆ ՎՐԱՅ Է:

ԽՈՐԱԳՐՈՒՄԵՆԱՆ ՈՂՂՈՒՄ ԳՐԱՔԻՆԸ ԵՍ Զ՛ՆԵՆ ՏՐԱԽԻՐ

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՔ Կանխիկ վճարելի են

E. TOROSSIAN
Direc.-propr. du journal arménien
ARCHALOUYCE
LE CAIRE (EGYPTE)

ԽՐԱԿԱՆ ԿԱՆ ԵՒ ԱԶԳ

ԱՐՇԱՆՈՅՍԻ Պատ. քառաս

Նորոգելու ցերեպայես կը խնդրուի որ քառասունին հարիւր տարիէն մնացեալ պարտաց կցեղոյ որիկը անտը իրենց ԵՐԿՐՈՒՆԵՐ ճարտարականի քառասունորսուցիւնը, եւ հարկ չը քողոյ մասնաւոր դիւնուներու, որով մոր դժուարութիւն մը պիտի ըլլան ԱՐՇԱՆՈՅՍԻ արդէն քաղաքացայ ճեղքուիւնը:

ՃԵՍԱՐՏՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

ԵՐԿՐՈՐԴ ՎԵՏԱՄՍԵԱՅ

«Աւր կամք կայ, անդ հնար» կ'ըսէին, մեր վարժապետները՝ երբ դպրոցական գրասեղաններուն վրայ, արդէն շուարած ծոյլ մանուկներուն գլուխին մէջ արմատացնել կ'ուզէին, թուարանութեան հասարակ կատարակէն խնդիր մը: քերականութեան ու թր մասունքը բանիներէն մին. վերլուծութեան հատուած մը. Նուա Պոնպիլիոսի գծուար մէկ կտորին թարգմանութիւնն ու լուծումը ե կամ՝ գասական քրիստոնէականն հարաւասակ ին դոյր: Այլ ո՛ր կը մնար ասոնց քով թուրքերէնի ու ֆրանսերէնի խճողումները...

Ասիկէ քառորդ դար մը առաջ, դրժուար պարագաներու հանդիպած ատեն՝ մեր ուսուցիչներուն բերնին մէջ սովորական դարձած վերոյիշեալ հինգ հատիկ սուղ-բառերը, որոնք երբ իրարու քով բերուին հոյա-կապ նշանակութիւն մը կուտան եղբ, երբ բէք պէտք եղած ազգեցութիւնը չ'էին գործեր իրենց գրասեղանները տաշելով ու ազատութիւնով զրազած մանուկներուն վրայ. սակայն հիմակ՝ երբ տարիները մէկ մէկու յաջորդած են, և հանդամանքները հիմէն փոխուած, չ'եմ գիտեր ինչո՞ւ, մանկութեան ժամանակէն յաճախ լսելով մտքիս մէջ արմատ ձգած այդ իմաստալից պարբերութիւնը կուգայ իր ընդարձակ իմաստովը ներկայանալ ինձ: Եւ երբ քանի մը տղերքով «Արշալոյս» ի երրորդ վեցամսէին համարատուութիւնը պիտի ընեմ, իմ Տեղեկագիրս՝ փոխանակ ժողովս (°) էն սկսելու —ինչպէս պիտի ընէր Գործադիր Ժողովի Ատենադպիր մը, գաւաթ մը շուր հրամայելէ վերջ — «ուր կամք կայ անդ հնար» ը գրչիս տակ կուգայ:

Այո՛, զօրաւոր կամքը և յարատեւ...

Թեան ոգին միացած, հրաշքներ կրնան գործել, ինչ որ տեսնուեցաւ եգիպտացեան հայութիւնը թերթով մը օժտելու ձեռնարկին մէջ:

Եթէ կամքը չ'ըլլար, «Արշալոյս» փախանակ չորրորդ վեցամսեայ մը կարենալ սղջունելու, արդէն իր խանձարուղին մէջ խեղճուած պիտի գտնուէր չարագործներէ լարուած թակարգին մէջ:

Եթէ կամքը պակասէր, մեր հակաուկորդները, իրենց յաղթանակէն չիպցած, գէպի մեզ գիւտչին ծիծաղներ ուղղելէ չը պիտի դադրէին...

Եթէ կամքի ուժը չ'միանար ձեռքի ու մտքի աշխատութեան հետ, այսօր «Արշալոյս» չ'պիտի կարենար ճշգրտապահութեան և պարտաճանաչութեան օրինակ հանդիսանալ ուրիշին:

Մեր ընթերցողներէն ո՞ր մէկը կուտայ թէ՛ մտքի մէջ սրուած որչափ նետեր ուղղուած էին մեր վրայ և ս'ըջափ առապարհներ կը կուտակուէին մեր գողող թայլերուն առջեւ. այնպէս որ այսօր իրաւունք կ'ունենանք նոյն իսկ պարծենալու թէ՛ մեր կարծքը իբր վաճառ անհիշելի կրցանք ներկայացնել չարամիտներու սրած նետերուն, և առ ոչինչ սեպեցիներ այն գաւերը՝ զորս կը նիւթէին խաւարի որդիք. և ահա առաջութիւն կը խորտակուին այն ամեն խտրութիւն որոնք մեր նաւուն ուղեգծին վրայ շարուած էին, ու ամօթապարտ կը կարկամին այն լայնափեռիկ բերանները, որոնք ակնդէտ կային մեր նաւարակութիւնը ի ձայն փողոյ և թմբկի ի լուր աշխարհի ծանուցանելու:

Սրբաբաւ «Արշալոյս» իր մէկ ու կէս տարուայ ընթացքին մէջ, կեանքի ամենագիտարին պայքարը մղեց. սակայն միևնոյն ատեն յաջողեցաւ պատուել ու ժողովուրդի աչքին առջեւ ներկայացնել այնպիսի գիմակուարներ, որոնք օր մը չ'է օր մը իրենց շահատակութիւնները աւելի ևս յառաջ պիտի մղէին և սղրուկներու պէս իրեն մորթին պիտի փակէին, իր արիւնը ծծելով սպառելու համար:

Բնական էր որ ամեն ատեն տարակարծիքներու և անոնց ոչխարամիտ կուտակցաց զշարեալ հակառակութիւնը պիտի սնուցանէինք մեզ գէմ՝ սակայն ուրախ ենք յայտարարելու որ «Արշալոյս» ի անխնայ հարուածներուն տակ շախմատեցան, փշրեցան ու անհետանալու վրայ են այդ ամենը և այդ բանին կենդանի վկան է «Արշալոյս» ի չորրորդ վեցամսեայ մը ողջունելը:

Նոյնքան հաստատ քայլերով և յարատեւութեամբ ինչպէս ասիէ առաջ:

Կամքի ուժին և յարատեւութեան ոգւոյն կը պարտինք գլխաւորապէս այս ամենը և պէտք է ըսել թէ՛ այդ ներշնչումը սնուցած ենք տարիներ առաջ մեր ուսուցիչներուն ստէպ գործածած իմաստալից նախադասութիւնէն, որ էր «Աւր կամք կայ անդ հնար»:

(Ծանոթանալիցի) Ե.

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԵԱՆԻՔ

Առ Հայ Մեղոյ

Քրիստոնէայ անունը կրող անձինք ամուսնական կապ հաստատելու չեն, ի սկզբան խոհակաւութեամբ, և բարձրագոյն տեսակետով կարգուելու մտադրութիւնը ի նկատի չ'առած: Այս եղանակով առաջադրուած ամուսնութիւն մը միայն՝ Արարչին փառաբանութիւնը կրնայ պահողել:

Մտուսնութեան սրբազան օրէնքը Եգիպտոսի մէջ արուեցաւ: Բնական, մաքուր, անմեղ յարաբերական վիճակն էր այն՝ զոր բժբանի չեն կրնար այսօր ոչ միայն գաղափարային ամուսնութիւն երազող ցուցափայտները, այլ նաեւ ճշմարիտ քրիստոնէայ անուան տակ ամուսնութիւն կնքողները: Հոգեկան էր այն քաջքը, սիրաշարժ կապը՝ որով միացան մեր նախածնողք: Անոնց զգացումներուն տեսքովը՝ հոգեւոր անբիծ ու անարատ խոյանքներովը կը գունդաւորուէր, և անդրադարձ ցողքերով Աստուծոյ ճանաչողութեամբ փառքը կը ցուցադրէր: Իրախարի երջանիկ ամուսնուն պատկառութիւնը եւ հովանին կամաց համաձայն եւեթ իրազորուեցաւ: Այժմու բղջիխոն ամուսնութիւնները խորհրդանշանող մոլի տախանքը մուտ գտած չ'էր ամուսնութեան անսուրբ շղարշով պարածակուող Արամին ու Եւային սիրածոյ սրտերուն մէջ: Մեր այլասերած, անբնականացած յօրինուածը, այս մեղապարտ ու պղծալից հողաբունքին վրայ երբէք չ'ընար զգալ այն վերագանց հաճոյքը, որ երբեմն տեսանելի հոսանուտի մը պէս շրջադաշտով, շղային զարմազան դրութեան ողորկ փառանքուն մէջէն, կեանքի արարչագործ ու ախանախա աղբիւրին հրաշալի պոյութիւնը կ'ապացուցանէր մարդուն մէջ և նախախնամութիւնը, այդ յորդանան փառակին կայլիներուն ծոցը սեղաւորուած տեսաւ, սկիզբէն մինչեւ աշխարհի վերջը պարող ազգերը, ինչպէս Ռեզնեկայի, Յակոբն ու Եսաւը յղանալու պահուն՝ որգանդին մէջ երկու ազգերու կազմակերպութիւնը յայտարարեց:

Ամուսնութեան խորհուրդը մեր կարծածէն շատ աւելի սուրբ ու նուիրական է: Ամուսնացողները պարտին շրջօրէն խորհրդածել ամուսնութեան մէջ բովանդակող բոլոր ատանձաշարտուներուն արդեանց վրայ: Ամեն որոշման ու գործի հիմը սրբագործուած սկզբունքները ըլլալու են:

Ամուսնացեալ մարդիկ իրենց ընտանիքը բազմացնելէ առաջ՝ իւրովի մտածելու են, հասու ըլլալու համար թէ՛ Աստուած, իրենց որդեծնութեամբ, պիտի փառաւորուի՞ թէ՛ անարգութիւն իրենց ամուսնական բոլոր տեղադրութեանը մէջ՝ միաբանութեամբ հետամուտ ըլլալու են փառաբանել զԱստուած: Խնամօք պարտին նկատողութեան առնուլ տղայոց պէտքերը: Այլոց վրայ բեռ ընելու նպատակով զաւակ ծնանիլը արդար գործ չէ: Ծնողք այս կերպ վարուելու բնաւ իրաւունք չ'ունին: Մոռնալու չեն ի հաշիւ առնուլ իրենց եկամուտի աղբիւրները, գիտնալու համար թէ՛ բաւակա՞ն է անոնցմով ընտանիք մը պահել, առանց որոյ հարկ պիտի ըլլայ բեռ ուրիշներուն կոնակն հանել: Եթէ իրենց ապրելու միջոցները խիստ սահմանափակ են, բացարձակապէս մեղանշել է զաւակ ծնանիլը, ըստ որում խեղճ մանուկները խնամքի, սնունդի ու զգեստի պակասութենէն պիտի տատային:

Մեր օրերը, երբ ամեն ինչ պակասած, խաթարուած է, ոչ ոք կը մտածէ այս բաներուն վրայ: Յայրատ, պագչոտ, կրքերը կը տիրապետեն ու չեն զսպուիր, թէ՛ եւ իրենց քայլերուն կը հետեւին վիշտ, թշուառութիւն ու մահ:

Կանայք՝ առանց խոյս տալ կարենալու անուակ զգացումներով լարուած այդ գրաւարար որոգայթէն, տառապալից ու դժոգակ կեանքի մը դատապարտուած են, ամուսին անունը կրող մարդոց անսանձ կրիցը պատճառաւ, եւ զորս անբան յորջորջել աւելի ճշգրիտ պիտի ըլլար: Ետտ մայրեր ողորմելի վիճակի մը են թարկուած են, անընդմէջ կրելով իրենց ծիւրած, մաշած թեւերուն ու կուրծքին վրայ ճաշած, սմբած մանուկներ, — կրից պտուղներ — զորս հազրու կը կարողանան սնուցանել եւ ցնցոտիներով պատել: Աշխարհ լի է այսգունակ թշուառութիւններով:

Հեղինակ ՏԻԿ. Ե. Կ. ՀՈՒԱՅԹ Ազատ Թարգմ. Կ. Գ. ՈՒԶՈՒՆԵԱՆԻ (Շարունակելի)

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Կ. Պօլիս 10 Փետրուար. — Բովաքէն (Արարիա) հասած վերջին լուրերուն նայելով, ամբողջ երկիրը տակնուվրայ է. Պէն Բաշիտի կուսակիցներէն ապստամբներու և շէյխերու միջև եղած կռուի մը մէջ 5 հոգի սպաննուած են:

Եսթլընտըն 10 Փետրուար. — 2500 Պօէր՝ Տը Ուէթի հրամանատարութեան տակ Բիլլըր գնդապետին առջևէն ետ քաշուած միջոցին թապաքսպէրկի մօտ հանդիպեցան գաղթավայրի 700 զօրքերու:

Անգլիացիք մեծ կորուստներ ունեցեր և Բօմ-Բօմ թնդանօթ մըն ալ Պօէրներուն ձեռքը թողեր են. բայց վերջապէս յաղողեր են Ջօրավար Նօքսի միանալ: Մինչև հիմա այդ կռուոյն վրայ խօսուած չէր. հիմա կը հասկցուի թէ՛ ինչպէս Տը Ուէթ կրցաւ դէպի հարաւ ճամբայ բանալ, թապաքսպէրկի բլուրներու Պէնօմֆօնթայի և Սմալտէլի կէս ճամբուն վրայէն: Գաղթավայրի զօրքերը թակարթի մէջ ինկած էին և իրենց թնդանօթը աւրուած էր:

Քէյթթաուն 9 Փետրուար. — Արշաւողները կրօնի Բէյնէթէ 9 մղոն հեռու են, Բօլլօտի մօտերն ալ արշաւողներ կան:

Ս. Բէթէրսպուրի 9 Փետրուար. — Վանէն առնուած լուրերուն նայելով 150 Հայ ընտանիքներ Ռուսիա գաղթելու փափաք յայտնած են, Եւրոպացի հիւպատոսները պատասխանատուութիւնը ստանձնած են:

Վիէննա 11 Փետրուար. — Սերպիոյ նախկին Միլան թագաւորը մեռաւ հոս:

Վիէննա 11 Փետրուար. — Լրագիրը

ները լացարձակապէս կը հերքեն Պրանց-ժօղէի կայսեր ամուսնութեան և զահէն հրաժարման վրայ պտտած զրոյցները:

Սօֆիա 11 Փետրուար. — Պուլկար Գօմիթէին նախագահութիւնը յանձնուեցաւ թաթարչէի, որ Մակեդոնացիներու ապրտամբութեան կուսակից է:

Հայտէլպէրկ 11 Փետրուար. — Պօէրները Վլաքֆօնթայի մօտ կառայտուա մը մը շեղեցուցած են. նոյնպէս ուրիշ կառայտուաբեր ալ, որք ճամբան նորոգելու համար զրկուած էին:

Փարիզ 11 Փետրուար. — Չինաստանի մէջ Պրանսացուց ըրած կողոպուտը վաղը նաւ պիտի դուրս թուլունէն, Չինական կառավարութեան դարձուելու համար:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

ՊՕՂՈՍ Փաշա Նուպար, Պատույ Լէգէնի ասպետութեան պատուանշանին արժանացած է:

ՎԱՐԴԱՆԱՆՅ ՏՕՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ. — Թէ՛ Պօլսոյ և թէ՛ Թուրքիոյ բոլոր գաւառներուն մէջ, ուր հայեր կը գտնուին, մտաւորապէս քառորդ դարէ ի վեր — Սուլթան Համիտի թագաւորած ժամանակամիջոցին մէջ — զրկուած են թատերաբեմին վրայ տեսնելու ազգային գոյն ունեցող թատերգութիւններ: Թուրք կառավարութիւնը իր անողօք ու հալածող ձեռքը դրած է մեր ազգայնոց մտաւոր վարդապետան այդ միջոցին ալ վրայ:

Պօլսոյ և գաւառներու սարսափէն յետոյ, յորում թրքահայք ապստան մը գտնուելու ի խնդիր էին, Տեհէ Պէնլեան ալ իրեններով Եգիպտոս հաստատուեցաւ. ու մինչև հիմա չորս հինգ տարի է եգիպտահայերը կը միթարէ Վարդանանց տօնին օրը անոր ողբերգութիւնը բեմ հանելով:

Այս տարի ալ, թատերաբեմի նահապետը, ուզած է Վարդանանց տօնը անյիշատակ չ'անցնել, ու իր շուրջ հաւաքած է իր ցրուած հօտը և պատրաստուած առաջիկայ հինգշաբթի Վարդանանց ողբերգութիւնը ներկայացնելու:

Թողունք որ գահիբէքնակ թատերասէր հասարակութիւնը պարտականութիւն պիտի զգայ իր ներկայութեամբ շքանորել ազգային ներկայացում մը, ալլ հարկ է որ ալլևս յարգուի հայ թատրոնին վաղեմի աշխատաւորը Տեհէ Պէնլեան:

Ա Յ Լ Ե Ւ Ա Յ Լ Բ

ՍՍՐՍՍՓԵԼԻ ՄԱՐԴԱՆԱՍՏԱՐ ՄԸ

Գերմանացի Տօքթ. Անկէլ՝ նախկին Տնօրէն Բրուսկան մարդահամարի սենեկին՝ 1850-էն ի վեր պատահած պատերազմներու մէջ կորսուած մարգոց և գումարներուն վրայ հետեւեալը կը հրատարակէ:

Նրիմի պատերազմ 1854. — 750 հազար հոգի մեռած, 9, 837, 500, 000 ֆրանք ծախս:

Իտալ. պատերազմ 1859. — 45 հազար հոգի մեռած, 1, 500, 000, 000 ֆրանք ծախս:

Պատերազմ Տանրմարքի 1864. — 3 հազար հոգի մեռած, 175 միլիոն ֆրանք ծախս:

Հիւսիս. Ամերիկայի պատերազմ 1861-65. — 280 հազար հոգի մեռած, 21, 700, 000, 000 ֆրանք ծախս:

Հարաւ. Ամերիկայի պատերազմ 1861-65. — 520 հազար հոգի մեռած, 11, 500, 000, 000 ֆրանք ծախս:

Աւստրո-Բրուսկան պատերազմ 1866. — 45 հազար հոգի մեռած, 1, 580, 000, 000 ֆրանք ծախս:

Մեքսիքայի և Գօլէնչիի պատերազմ. — 65 հազար հոգի մեռած, 1 երկիրին ֆր. ծախս:

Պրանս. Գերմ. պատերազմ 1870-71. — 155 հազար հոգի մեռած, 15 երկիրին ֆրանք ծախս:

Գերմ. 60 հազար հոգի մեռած, (ծախքը չէ գրուած):

Սերպ. Բուլկար ապստամբութիւն. — 25 հազար հոգի մեռած, 875 միլիոն ֆրանք ծախս:

Ռուս. Թրք. պատերազմ 1877. — 250 հազար հոգի մեռած, 5, 625, 000, 000 ֆր. ծխ.:

Հարաւ. Ամերիկայի պատերազմ. — 30 հազար հոգի մեռած, 41, 750, 000 ֆր. ծախս:

Աֆղանիստանի պատերազմ. — 25 հազար հոգի մեռած, 66, 250, 000 ֆրանք ծախս:

Թուրքիա 1894-97 — 300 հազար հոգի, 2, 500, 000 հոգի մեռած, 66, 760, 000 ֆր. ծխս:

ՍՈՍԿԱԼԻ ԱՆՆՈՂՆԵՄՈՒԹԻՒՆ ՄԸ

Գեղացի երէց մը Վիգ Աբբա, Պատեանի մօտերը գիւղ մը գացած էր իր եղբորը անդրանիկ որդւոյն ամուսնութիւնը կատարելու համար, նոյն գիւղի աղջիկներէն մէկուն հետ:

Արարողութենէն յետոյ, հրաւիրեալները հաւաքուած էին և մտադիր էին լաւ մը խմել և պատուական խնճոյք մը կատարել:

Սեղանը պարագային համեմատ զարգարուած՝ սայլատան մը մէջ դրուած էր: Յանկարծ Վիգ Աբբան անկիւնը դրուած հին հրացան մը նշմարեց և զայն ցցուց փեսային. փեսան զէնքը առաւ, համոզուած թէ լեցուն չէր և կատակելով ըսաւ.

—Որ՞նչ նշան առնեմ:

Հարսը մէջ մտնալով յանկարծ ըսաւ.

—Ինձի՛:

Ամուսինը նշան կ'առնէ և հրացանին բլթակը երբ կը քաշէ՝ սոսկուով աղաղակ մը կը հետեւի հրացանի պայթումին:

Ձէնքը լեցուած էր և դժբաղդ մանկամարդ օրիորդը կուրծքէն զարնուած՝ շանթահար գետին կ'իյնայ, մէկէն ի մէկ արեան հեղեղով կարմրած կուսական արդուզարդին մէջ, գեղեցիկ նշանածին ի տես, փեսան ալ կուղէ ինքզինքը սպաննել, բայց քովինները ձեռքը կը բռնեն:

Գալով Աբբային, խեղճ մարդը երկու օրէն կը մեռնի:

Խ Ա Ռ Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

—Պատերազմական նախարարը Օսմանեան Արշիպեղագոսի ռազմական առանձնացած դիրքէն դժգոհ, հրամայած է ընդժովեայ հեռագրական գծով վեց կարևոր կղզիները Պօլսոյ հետ միացնել:

—Ասկէ առաջ լուր տարածուած էր թէ Իլմիրի մէջ ժանտախտ կայ: Մասնաւոր նամակներ կը հերքեն ժանտախտի գոյութիւնը Իլմիրի մէջ:

ԹՈՒՐԿԻԱ

Խարբերդէն առնուած մամուլը նախաձեռնութիւն կ'իմանանք թէ, կը գրէ Հայրենիք. Դեկտ. 18 ի գիշերը 5 ծալտած անձեր

Աշխատանքները իրենց կը մըտնեն և կ'սպառնան սպաննել, եթէ իր բարձր ունեցած դրամը իրենց չ'յանձնէ: Մարդը կեանքը փրկելու համար իր կնոջը իրեղէնները և եկեղեցւոյ սպասները որոնք իր քով պահ դրուած էին, կուտայ և գողերը կ'առնեն կը հեռանան:

Նոյն նամակները կը պատմեն թէ՛ կառավարական խտուրթները իրենց գազաթնակէտին հասած են. տուրք մը կը հաւաքուի կառավարական նոր շէնք մը շինելու համար. ծեծ քայքայ չ'ունի:

«Նոր կեանք» էն կը քաղենք. Գրական ձափ ցեղը, Մահմուտ փաշա մը իրեն գլուխ ունենալով թուրքիայէն Պարսկաստանի սահմանները արշաւած է, և բազմաթիւ զիւղերու վրայ յարձակելով զանոնք սկսած է թալլել: Կ. Պոլսէն Յունուար 11 ին կը հեռագրուի որ աւարառութիւնը դեռ մինչև այն օրը կը շարունակուէր: Պարսկական Դեսպանը Իրան բողբաջիք ներկայացուցեր է:

Պատերազմական տուգանքին ի հաշիւ, թուրքիա 350,000 ոսկի ամբողջապէս վճարած է Ռուսոյ:

ՀԱՊԵՇԻՍՏԱՆ

Ամարայէն Փետր. 4 թուականաւ կը գրեն:

«Ատիս Ապագայէն հասած լուրեր կը հաստատեն թէ՛ Կոստանթնուպոլսէն Յունուար 16 ին մեռեր է. սղան Պէզապէն, որ այժմ Մենելիքի արքունիքը կը գլխուի, իրեն յաջորդեր է:

Ս Պ Ա Ն Ի Ա

Գարլուս Գուրնթո յաժառարակը, որ Սթիվէնտի նաւահանգիստին Սպանիան պիտի ներկայացնէր, մեքենայի խանգարման պատճառաւ ստիպուեալ է ձերբազաւ Ռուսի զատերազմանաւ պատրաստ չ'ըլլալուն համար, Սպանիա չէ կրցած մասնակցել նաւային հանգիստին: Սպանիական կառավարութիւնը իր ցաւը յայտնեց էլ լոստրա:

Խեղճ Սպանիա:

Մեր գիտցած Գարլուս Գուրնթոն, Փի-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՁԵՍՆՑ ԹԱԳՈՒՅԻՆ

Եւ աչքերը փակելով, Սիլվիա պահ մը հիւնաւորը յիշատակներու մէջ թաղուեցաւ. իր խոկմանց նիւթը կը բազմապատկէին հայրենի բնակարանին տեսութիւնը, որ այսօր այնքան հեռաւոր էր եւ այն սեղանը որ կը շրջապատուէր մանուկներու եւ ծերերու դէմքերով:

Միեւնոյն վայրկենի նրբանցքին մէջ ձայն մը լսեց:

—Տիկին Սիլվիա աը նախ, այս պահուս մէկը չ'ընդունիր, կը յարէր Մօսկու:

—Անպատճառ կուզում անոր խօսիլ, կ'ըսէր ձայն մը:

—Մոզմ մը տեղի ունեցաւ հոն, փոքր մը դում մը եւս, և գուրը բացուեցաւ: Սոսկացած գերասանուհոյն առջեւ մարդ մը երեւցաւ, խոփոռ աչքերով եւ նիհար ու սոգոյն դէմքով:

—Կերողութիւն... թոթովեց նա. — Ո՛հ, ներողութիւն, Տիկին, ըրածս անմտութիւն է, գիտե՛մ, բայց դուք միայն կարող էք մեզ փրկել. գթութիւն... գթութիւն կը պաղատիմ:

լիպեան կղզիները երթալու ժամանակ ալ փոքրիցաւ, այսինքն մեքենայի խանգարում ունեցաւ:

ՏՕՔԹ ԲՕՐՆՖԵԼՏ

ՎԿԱՅԵՍԻ ԱԼԷՆԵԱՅԻ ՀԱՍՏԱԼՍԱՐԱՆԷՆ

Նախկին Ներքին Բժիշկ Վիլհելմայի գլխաւոր հիւանդանոցներուն: Մասնագէտ միզանցքային հիւանդութեանց, Գաղղիական ախտի, կրկորդի, քիթի և բերնի հիւանդութեանց:

Ամէն օր հիւանդ կ'ընդունի կէս օրէ առաջ ժամը 10 էն 12, իսկ կէս օրէ վերջը ժամը 3 էն 5, իր տունը Երեւան փաշա փողոց, ԱՂԵՔՍՆՆԻՐԻԱ:

ԱՉՔԵՐՆԻՍ ԲԱՆԱՆՔ

Ինչ կ'ըսեն թրքերը PRO-ARMENIAի երեւումին համար:

Գեղեցիկներ 1 ի «Մէլլէրէթ» անգամ մըն ալ պերճախօս ապացոյցներ կուտայ թէ՛ ինչ են «Երիտասարդ թուրք» կոչուածները, և ինչ բանի կը ձգտին Սուլթանի այդ շնորհները:

Ահմէտ Ռիզա այս անգամ ալ իր դիմակը վար առնելով, իր աղտոտ ու միջնադարեան դէմքը ցոյց կուտայ մեզի. թէ և միւս կողմէն կը ջանայ քաղաքակիրթ աշխարհին կլլեցնել թէ՛ ինք լուսամտ և բարենորոգմանց կուսակից Սահմանադրական թուրք մըն է:

Արդէն հարկ չկար այդ յօդուածին Ահմէտ Ռիզաի և իր կուսակիցներուն ինչ ըլլալը հասկնալու համար: Այդ խաւարամիտ թուրքը, Յուլիանիէսի Միջազգային Համաժողովին մէջ, Հայոց նկատմամբ ինչ վատ վերաբերում մը ունենալը յայտնապէս ցոյց տուած էր արդէն:

«Բո Արմենիա տիրութիւն տակ — կ'ըսէ այդ Սուլթանի փոխունքին խմբագիրը — Հայ յեղափոխականները կիսամահայ Հանդէս մը հիմնած են Փարիզի մէջ Ֆրանս-

Սիլվիա՛ նախ «օգնութիւն» աղաղակելու գաղտնիքն ունեցաւ, սակայն իր պաղարիւնութիւնը պահելով, այս հեծեծածայն խօսող օտարականին երեսը նայեցաւ:

—Կը լսեմ քեզի, պարո՛ն, ինչ կ'ուզես ինձմէ:

—Այո՛, ներեցէ՛ք ինձ, ներեցէ՛ք, որ եւ կած այսպէս... բայց անհրաժեշտ պէտք էր: Անունս ձեզի անծանօթ է, Տամպրէօն է անունս և Մառէ փողոցին մէջ խանութիւնս մ'եմ. անշուշտ չէք ճանչնար եւ նոյն իսկ ես որ քիչ անգամ թատրոն կ'երթամ, միայն մէկ անգամ զձեզ տեսայ ու թ օր առաջ «Թէաթր Մօսկու» ի մէջ, ձեր տուած ներկայացման ատենը:

—Է՛հ, ինչ կ'ուզես ուրեմն, հարցուց Սիլվիա:

—Ա՛հ, Տիկին, գաւազ մեռնելու մօտ է. գաւազս. կը հասկնա՞ք այս բաները որ սրտէս կը խուլին:

Եւ Տամպրէօն կուլար:

—Ինչ կ'ընամ ընել քեզի, հարցուց Սիլվիա կամաց մը:

—Ամեն բան, Տիկին, ամեն բան. իմ փոքրիկ Բիէնս, իմ մէկ հատիկ Բիէնս ուղեղային ջերմէ մը կը մեռնի կոր... վե՛ց տարեկան, Սոսկալի բան, այնպէս չէ... ո՛չ մէկ դարման օգուտ մը կ'ընայ ունենալ. միշտ ցնորման մէջ է. բժիշկը կ'ըսէ թէ՛ ամեն բան վեր-

սերէն լեզուաւ, և որուն Տնօրինութիւնը յանձնուած է Պ. Բիէն Գիեաուի:

«Առաջին թիւերուն մէջ՝ Բիէնսուս, Բուխանսէ և այլն ստորագրութեամբ մէկ քանի յօդուածներ կարգացինք, որոնցմով այդ համալուար գրագէտները, իրենց աշակցութիւնը կը խոստանան Հայկական դատին:

«Երջանիկ ենք — կը յարէ Ռիզա սղաոր Հայկական հարցը ա՛յսպիսի հոյակապ գրիչներու ձեռք յանձնուած է, որք գիտեն կրօնամոլութեան անկերթ յղացումներէ ազատ ոգով զայն վարել:

«Հայկական հարցը, միայն քաղաքակրօնական շահագործման մը առարկայ եղած էր. բայց հիմա որ մարդկութեան հողին վրայ կը դառնայ, շահագործողները և ինքնակոչ հերոսները և կամ քրիստոնէութեան մարտիրոսները, ստիպեալ իրենց ձայնը պիտի կորսնցնեն:

«Խմբագրութիւնը իր լրագրին ճակատը դրուած մէկ ծանուցումով, մեզ կը վրստահացնէ թէ՛ իր նպատակը խաչակրութեան մը ոգին արթնցնել և կամ ատելութեան զգացումները գրգռել չէ:

«Կը յուսանք թէ՛ այդ խոստումը խրատօրէն պիտի յարգուի, այդ Հանդիսին բոլոր միւս թիւերուն մէջ ալ: Խիստ տարօրինակ և զարմանալի է թէ՛ այդ թերթը միմիայն պաշտպան պիտի կանգնի Հայոց դատին, որ բոլոր Փոքր Ասիոյ ցեղերուն մէջ միակ ուշիմ ու մտացի ազգն է և անհարնդունակն է եղեր արեւմտեան քաղաքակրթութեան: Թող մեզի ներուի հոս հարցնել թէ՛ թուրքոյ միւս ցեղերը, գոնէ Արաբները, արդեօք խելացի չ'են և յառաջագիմութեան ընդունակութիւն չունին»:

«Մենք կը կարծենք թէ՛ — կ'ըսէ — արդէն Արաբացիները պէտք եղածին չափ ցուցուցած են իրենց զարգացումը և կարող եղած են արտագրել շատ մը բաներ, և ասիկա ա՛յնպիսի ժամանակներ, որու միջոցին ընդհանուր Եւրոպան Աստուածաբանութեան և տգիտութեան խաւարներուն մէջ կը տապալկէր:

Չացած է: Սակայն գաւազ իր ցնորման մէջ իսկ չի դադրի պահանջել ու թն օր առաջ տեսածը, որուն յիշատակը իր փոքրիկ հիւանդ գլխուն մէջ պահած է: Գիտէ՛ք տղայոց յիշողութիւնը մերիներուն հետ բազմաթիւ կարելի չէ: Այդ տեսքը զայն եղակնապէս դիւրած է. և նա գիշեր ցերեկ կ'երազէ, բարձրաձայն աւոր գալը պահանջելով: Ետտեղ կ'ըսեն թէ՛ զայն ազատելու միակ միջոցն է... բայց ինչ ընենք:

—Ո՞վ է քու տղուս ուղած անձը:

—«Սխրալի լեբանց ձեանց թաղուհին» է:

Պարոն Տամպրէօն պահ մը լսեց շնչասպառ եւ յետոյ յարեց:

Փոքրիկ Բիէնս թատրոն տարած էի, ձեզի տեսած էր եւ հիմակ նորէն տեսնել կ'ուզէ: Այժմ մտածեցի որ այս բարի գործը դուք կըրնայիք ընել. բայց խնդրութիւն է, այնպէս չէ՛ ձեզի աղաչելը. ձեզի... այս հոգեվարքին օրօրօցին քով գտլու...:

Երբորդ արարուածը պիտի սկսէր, դերասանները Տնօրէնին կողմէ թատերաբեմ կը հրբաւիրուէին:

Իերասանուհին Սիլվիա, իր առջեւ կեցող այս գժբաղդ մարդուն նայեցաւ, որ մերժուելու երկիւղէն կը դողողէր:

Արդարեւ մեծ տառապանքի եւ յոյզերու մէջ թաղուած էր նա:

(Շարունակելի) Թարգմ. ՕՆՆԻԿ

«Օղտակար կ'ըլլար մեր օտար դիւանագէտներուն համար, արեւելքի անցեալը արեւմուտքի անցեալին հետ բաղդատել: Եւրոպան նոյն իսկ բարոյականութեան (°) և թոյլատրութեան դասեր պիտի գտնէ: Արաբական, Սելճուքեան և Քրիստոսեան դասեր թուրքերուն մէջ»... (Օհո՛՛...):

Շատ պարզ և որոշ է թէ՛ մեր կեղծաւոր թուրք յեղափոխականը, — գիտեմ որ այդ անունը կ'անպատուեմ. բայց ինչ և է — չ'կրնար կոր մարտել Pro Armenia ի երևումը, և հայկական դատին պաշտպանութիւնը այդպիսի ակամաւոր անձանց ձեռքը անցնելը իրեն հանդարտ քուն քնանալ չ'տար: Խեղճ Ահմէտ աղա, որ տարիներէ ի վեր իր թուրքերը կը պատուէր, եւրոպայի գլուխը խոթելու համար թէ՛ թուրքիան սանկ է, թէ՛ թուրքիան նանկ է, թէ՛ Օսմանցիները քաղաքակրթեալ մարդիկ են, թէ՛ ժամանակին երանելի սահմանադրութիւն մը ունեցած են, թէ՛ Միտհատ փաշայի պէս դահիճներ արտադրած են, թէ... թէ... վերջապէս թէ-երու ջրհեղ մը:

Ահմէտ Բիզա — Սուլթանի այդ հաւատարիմ շնիկը — սուտ կը հանէ Հայաստանի մէջ եղած խժդոկութիւնները. կը հերքէ Pro Armenia ի մէջ հրատարակուած ջարդի տեղեկութիւնները և ելեր խրատ կուտայ Գիւնարի, Կոհիէի, Քէմալի պէս տաղանդներու: Թուրք դուռ՛ գլուխ մը ելլայ խրատ տո՛յ այդպիսի հայակապանձանց, Mais c'est trop épatant, mon cher Ahmed Riza !:

Կը կատրի մեր digne jeune Turcը, Հայերուն տրուած այդ նախապատուութեանը համար. հապա՛, ի՞նչ ըսել է թիւրքերը, քիւրտերը, չէրքէզները, արաբները կեցած ըլլալով, ելլալ Հայոց նման ազգի մը այդ աստիճան կարեւորութիւն տալ:

Թիւրքերը քաղաքակրթութեան դասեր տուեր են ելեր եւրոպայի, ծիծաղաշարժ չէ՛ այդ յաւակնատութիւնը: Սելճուքեան քաղաքակրթութիւնը passe encore. բայց թրքական փաղափարքորութեան մը գոյութիւնը խոստովանելու չափ տխուր ըլլալ, Ահմէտ աղայի մը խելագատակին միայն ներելի է:

ԼԵՒՈՆ

(Շարունակելի)

ՀՆԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Table with 6 columns of numbers: 7564, 9404, 4676, 4742, 9067, 1350; 8953, 2287, 266, 8186, 883, 6051; 3123, 3371, 8465, 4267, 9104, 2051; 8054, 3107, 3232, 3187, 1592, 978; 7843, 871, 675

ՀՐԷՆՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐՈՒՄԱՆ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Table with 6 columns of numbers: 24, 6845, 7097, 7288, 427, 538; 1495, 1757, 2563, 2662, 2889, 3016; 3514, 3708, 4292, 4832, 4961, 5642; 5789, 6298, 6517, 6637, 7136, 7241; 7251, 7633, 7941, 7953, 8137, 8574

Տպագրութիւն ԺԱՂԱՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՈՒՑՈՒՑԻՉ Ե. ԱՊՅԵԼԵՆԿԻՐ

Պալատի փողոց. Խաղնետարի սեփականութիւն, Պրիսթլ Սթրիթ ճիւղ գիմաց, Գաթէ Տը Լա Պուրսի կից:


Հին եւ նոր ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՉ 6500 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ Աշխարհի ամենէն լաւագոյն կաբի մեքենաները ՍԻՆԿԵՐ ներն են և ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է:

400 է աւելի վիսյականներով և մեայններով վաճառուած, Երաշխատեալ մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՇ ՎԱՐՁՍՏՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանկիսին մէջ ստացած է:

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ ԿԱՅՍԵՐՈՎԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՅ ԿԱՅՍԵՐՈՎԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՅ ՀԱՅԹԱՅԹԻՉ Ե. Բ. ԱՏԻՎԱԿԱՆ ՅԱՆ



Կեղծերէն գոլշանալ, ուշագրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԵՐ ի յատկանշիկն:

ԳԻՆ ՉՊՓԱՒՈՐ

ՄԱՆԿԱՔԱՐՉ ՏԻՎԻՆ ՍՈՍԻԿ ԱԶԳԱՊԵՏԵԱՆ Շարա-Այսիւղ-Ազիզ

Վերջերս իւր բնականութիւնը նուրբանփրէն փոխադրած է Շարա Ապտիւլ Ազիզ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին դիմաց, Ահմէտ պէյ Ապտիւլ Բազդիի 20 թիւ սեփականութեան մէջ:

Տիկին Սօֆիկ Ազգապետեան իւր փորձառութեամբ և յաջողակութեամբ արգէն ծանօթ ըլլալով գոհիբերնակ ազգայնոց և նոյն իսկ օտարաց, աւելորդ կը համարուի զոյն յանձնարարել իւր խնամոցը պէտք ունեցողներուն:

Վկայեալ աղքատներուն համար ձրի դարմանում:

ՄԻ ՄՆԱԲ ԵՐԲԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՌՅՈՒ

Քանի որ ՍԵԼՎԱՃԱՆ Վաճառատան մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 Վճի նիքէլ, կոթէն լարեղ սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւ տեալ է նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 ՂՐԵ է սկսեալ մինչև 2500 ՂՐԵ: Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, և արծաթե ժամացոյցներ. պատի և քօնու ի սպառնալան Բանտիլներ և ամեն ճաշակի յարմար Գահարեղէնք:

Ճոխ հաւաքածոյ ըուն Ամերիկեան Թո. նոկրաֆներու:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ «ԱՐՇԱԼՈՅՍ» ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԿԱ ԱՐԶԻ ՍԿԱՐԸ Օտանկի ղեղարմին ղիւնցի փողոցին մէջ.

Ժողովրդական տպարանին մէջ կը պատրաստուին.

Այցեխարտեր, Երաշխաւ տեալներ, Գիւլեր, Հրաւիրագրեր, Մահազգներ, Տեղեկագրեր, Կանոնագրեր, Տոմար և այլ և այլ տպարանի վերաբերեալ յանձնարարութիւնները կը վաճառուին հեռեկայ գրքերն:

1. ԲՆԱՇՄԱՐԶԻԿ ԲՍՄԱՐԱՆ Ի Ս. և Բ. պրակներն, սրանք նոր հասած են և որոց մասին արգէն խօսուած է «Արշալոյս» մէջ:

2. ԱՐԲՈՒՆԻ, որ նոյնպէս նոր հասած է և որոյ ի թուրքիա մուտքը, ինչպէս կը լսենք, արգիլուած է ելեր:

3. ՀԱՒԱՔԱՏՈՅ Հայոց ժողովրդական երգերու, Փարիզ տպարանի, Տիւրքիոյ թեատր Տ. Լեոն Եղիազարեանցի:

4. ՉՈՒՍՐՃՍԻ Անիքթամեր և ժողովրդական վէպիկներ կամ Մարդկային կենաց վարդապոյր և ուրիշ նոր հրատարակութիւններ:

ՏՃԻ ՄԻՉՈՒՄԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒ 1 ՄԻԼԵՍ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արգէն վճարած է կամ ի նպատակի ենց գումարած է 3 ՄԻԼԵՍ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ տեղերէն և ամեն ճաշակի յարմար Գահարեղէնք:

Ս. ԼԵՕՆԱՐ Ընդհանուր ներկայացուցիչ Ի Գահիբէ

Աշխարհի մէջ գտնուող բոլորիչը և է լինկերութենէ աւելի երաշխաւ տրուելիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ:

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ զլլաւոր գործաւ կատար յՍ. Ե. քսանգրիա: